ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

Հայ գրերի գիւտի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400-ամեակի Համազգային Մեծ Տօնի առիթով Բագուի Հայոց Կուլտուրական Միութիւնը որոշել է իր հրատարակութիւնները սեպտեմբերի 20-ից մինչև հոկտեմբերի 20-ը էժանացրած գներով տարածել հայ հասարակութեան լայն խաւերում և այդ նպատակով ուղարկել է իր ներկայացուցչին Թիֆլիս։

—

Գրական-Գեղագիտական Սալօնը որոշել է ուրբաթ, հոկտեմբերի 18-ին իր հանդիսաւոր jour fixe-ը նուիրել Համազգային Մեծ Յոբելեանին, ուր կը կարդացվեն ըէֆերատներ հայ տառերի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի շուրջ՝ բացի հայերէն և ռուսերէն լեզուներից, նաև ֆրանսերէն ու գերմաներէն։

Հետեւեալ օրը, շաբաթ երեկոյեան, կը կատարվի հանդէս Սալօնի հիւրերի և «Աղբիւրի» ու «Տարազի» բաժանորդների երեխաների համար։

Կիրակի ցերեկով, Խօջիվանքի գերեզմանատանը թաղված՝ ս. Սահակի և ս. Մեսրոպի պատկերները ստեղծող՝ նկարիչ Ստեփանոս Ներսիսեանի գերեզմանի վրա տեղի կունենայ Գրական-Գեղագիտական Սալօնի նախաձեռնութեամբ կանգնեցվող մահարձանի բացումը։

Հոկտեմբերի 3-ին լոյս կը տեսնի «Աղբիւր-Տարազի» հրատարակութեամբ Համազգային Մեծ Յոբելեանին նուիրված մի շքեղ պատկերազարդ ժողովածու։